Ակադեմիկոս ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀԻՆՅԱՆ. հայրենասերը, ուսուցչապետը, գիտնականը։ Կազմող՝ Արամ Շահինյան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2006, 361 էջ։

Գիրքը նվիրված է Հայաստանի Ազգային ակադեմիայի ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ Արտաշես Լիպարիտի Շահինյանի կյանքին և գիտական գործունեությանը՝ նրա ծննդյան 100-ամյա հոբելյանի առթիվ։ Ականավոր գիտնականը Հայաստանում հիմնադրեց և զարգացման լայն հունի մեջ դրեց հայկական մաթեմատիկական դպրոցը՝ այն հասցնելով միջազգային ճանաչման։ Նշվածը համբավավոր մտավորականի գործունեության միայն գիտական կողմին է վերաբերում, մինչդեռ գիրքն ունի շատ ավելի լայն և հիմնավորված նպատակ՝ ուրվագծել Շահինյանին, որպես հայրենասերի, ուսուցչապետի և առհասարակ մարդուն՝ իր ներաշխարհով ու հոգևոր-բարոյական արժեքներով։ Ըստ այդմ, կազմողը պատշաճ առաջաբանից, Ա. Շահինյանի կյանքի, գիտական և գիտակազմակերպչական գործունեության համառոտ ակնարկից հետո ամբողջ նյութը մատուցել է տարբեր խորագրերով և համապատասխան ժանրերով, որի շնորհիվ փաստական ամբողջ շարադրանքը ստացել է բազմազանություն ու ճկունություն՝ ակադեմիկոսին ներկայացնելով իր անհատականության ամենատարբեր դրսևորումների մեջ։ Այստեղ զետեղված են Ա. Շահինյանի հուշագրությունը իր ընտանիքի, կրթության և ուսուցիչների մասին, հայկական մաթեմատիկական գիտական դպրոցի կազմավորման մասին նրա ելույթներն ու հոդվածները, հայ մաթեմատիկոսներին տված բնութագրերը, նամակներ ու հիշողություններ, էջեր իր հրապարակախոսական հոդվածներից ու նամակներից։ Գրքի վերջում առանձնացված են Ա. Շահինյանի մասին ակադեմիկոսներ Մ. Վ. Կելդիշի, Ն. Վ. Բոգոլյուբովի, Ն. Մուսխելիշվիլու, Ի.Վեկուայի, Լ. Դ. Ֆադեևի, Դ. Չխիկվեշվիլու, ինչպես և Մ. Սարյանի և Հ. Սահյանի կարծիքները Ա. Շահինյանի մասին։ Գրքին փաստական հագեցվածություն է հաղորդում Հավելվածը, որ ներկայացնում է գիտնականին ուղղված՝ Մ. Կելդիշի, Վ. Սմիռնովի, Ս. Մերգելյանի, Ռ. Ալեքսանդրյանի, Մ. Ջրբաշյանի և այլ խոշորագույն գիտնականների ինքնագիր նամակների վերատպությունները։ Ա. Շահինյանի կյանքն ու գործը վերարտադրող այս հարուստ հավաքածուն հնարավորություն է տալիս շոշափելի պատկերացում կազմելու նրա արտասովոր ընդունակությունների, ընտանիքի, ուսման և միջավայրի մասին, որտեղ ձևավորվել է նրա անհատականությունը։

Ա. Լ. Շահինյանը 1940-1970-ական թթ. հայ մտավորականության փայլուն ներկայացուցիչն է, որի գործունեության արգասիքը եղավ հայրենական մաթեմատիկական դպրոցի ստեղծումը՝ իր առաջատար ուղղություններով և զարգացման ամուր պատվանդանով։ Այս գործընթացն ապահովող գիտական բարձրորակ կադրերի պատրաստման համար ևս Ա. Շահինյանը չխնայեց ոչ ժամանակ և ոչ էլ ջանքեր։ Նրա գիտակազմակերպչական գործունեությանն է առնչվում զարմանալի հոգատարությունը նոր բարձրացող սերնդին իմացության արահետներով ուղղորդելիս։ Հայկական մաթեմատիկական դպրոցի ճանաչված ղեկավարը Հայաստանում մաթեմատիկական օլիմպիադաների հիմնադիրներից էր։ Գիտության զարգացման մեջ կարևորելով սերունդների հերթագայությունը՝ նա հենվում էր ազգի մտավոր ներուժի վրա։ Դրա շնորհիվ նրա բազմաթիվ ասպիրանտներ և ուսանողներ պետք է դառնային գիտական նոր ուղղությունների առաջատարներ։

Կազմողին ըստ ամենայնի հաջողվել է ցույց տալ, որ Ա. Շահինյանը գիտության բարձունքներին է հասել իր անկոտրում աշխատասիրության, համառության ու հաստատակամության շնորհիվ: Այս որակներն էին, որ հնարավորություն տվեցին Ա. Շահինյանին՝ գիտական հիմնարկները հագեցնելու նոր տեխնոլոգիաներով, հաջողությամբ ընթացքի մեջ դնել կադրերի պատրաստման և նրանց աշխատանքի պայմանների ապահովման, գիտահետազոտական աշխատանքների կենտրոնացման, համակարգման ու ղեկավարման գործը: Այս առումով նկատենք, որ գրքի հիմնական թեմաներից մեկը՝ Հայաստանում մաթեմատիկական դպրոցի հիմնադրման պատմությունը, առարկայական է դառնում ընթերցողի համար՝ գիտության խոշորագույն գործիչների կողմից Ա. Շահինյանին ուղղած նամակների միջոցով: Դրանցում շոշափվում են և՛ զուտ գիտական հիմնահարցեր, և՛ գործնական բնույթի խնդիրներ: Բացահայտվում է Ա. Շահինյանի կապը խորհրդային առաջավոր գիտության գագաթների հետ: Հիրավի, Հայաստանում մաթեմատիկական դպրոցը զարգանում էր ռուս խորհրդային և նրա միջոցով՝ համաշխարհային գիտության հետ ունեցած սերտ առնչություններով:

Ա. Շահինյանի դիմանկարին ցայտուն ուրվագծեր է տալիս «Հիշողություններ և նամակներ» բաժինը, որտեղ ընդգրկված են Վ. Համբարձումյանի, Խ.Դաշտենցի, Ս. Կապուտիկյանի, Ս.Երեմյանի, Հ.Սահյանի և այլոց նամակներն ու գրությունները՝ ուղղված նրան, և իր՝ ակադեմիկոսի նամակները մտավորականներին: ՀՀ ԳԱԱ նախագահ, աշխարհահռչակ գիտնական Վ. Համբարձումյանը կարծեք հանրագումարի էր բերում ժամանակակիցների արդարամիտ գնահատականը Ա. Շահինյանի կարևորագույն ներդրմանը՝ հայրենական գիտության մեջ, երբ գրում էր. «Դուք գիտեք, որ ես բարձր եմ գնահատում Ձեր կողմից կատարված աշխատանքը, որի շնորհիվ այստեղ՝ Հայաստանում, սկսեց զարգանալ մաթեմատիկան» (էջ 158):

Շահինյան մարդու, քաղաքացու և ուսուցչապետի կերպարի բացահայտմանը անփոխարինելի դրվագներ է ավելացնում «Էջեր Ա. Շահինյանի հրապարակախոսական հոդվածներից, ելույթներից, նամակներից» հատվածը: Ընթերցողն այստեղ ճանաչում է մտածողին, նրա սկզբունքայնությունից բխող քննադատական սուր հայեցվածքին՝ մարդկանց և իրականության նկատմամբ, միաժամանակ, լայնախոհությանը, խստապահանջությանը իր հանդեպ, սակավապետությանը: Հայտնի է, թե իշխանություններին ընդդիմանալը, այն էլ պատերազմի տարիներին, ինչ հետևանքներ կարող էր ունենալ: Այդ տարիներին, երբ բնակիչներից գունավոր մետաղներ են հավաքում, ցանկանում են վերցնել նաև Շահինյանների ընտանեկան ինքնաեռը, որին առարկում է գիտնականի մայրը: Դիմում են Ա. Շահինյանին՝ պահանջելով հանձնել ինքնաեռը: Նա գրում է մորը. «Սիրելի մայրիկ, հաշվի առնելով, որ պատերազմում մեր հաղթանակի բախտը կախված է մեր ինքնաեռից, խնդրում եմ հանձնես բանակի ֆոնդին» (էջ 151): Ինքնաեռը տանում են նամակով հանդերձ և բոլորիս հայտնի անդադրում հաստատությունը գործ է սարքում Շահինյանի վրա, որը ոչնչացվում է (եթե նման գործերը երբևէ ոչնչացվում են) միայն 60-ական թթ. Ա. Քոչինյանի կարգադրությամբ:

Ա. Շահինյանին ներհատուկ հումորի զգացումը վերածվում էր սարկազմի, երբ խոսքը վերաբերում էր գիտության զարգացմանը խոչընդոտող անձանց և երևույթներին: Հույժ տպավորիչ է նրա ելույթը Երևանի պետական համալսարանում (1975), որտեղ կանգ է առնում թարգմանական խոտանի վրա: Շահինյանն ապաշնորհության դեմն առնում էր ոչ միայն տրամաբանության ուժով, այլև ցուցադրելով դրա ծիծաղելիությունը՝ տեխնիկական տերմինների մի

բառարանի արտառոց բառակազմության օրինակով։ Ակադեմիկոսի այդ ելույթը պահպանում է իր այժմեականությունը՝ ուղղվելով հատկապես այսօր ամենուրեք վխտացող «եզվաշինարարների» դեմ։ Ա. Շահինյանի լեզվական խոր զգացողությունը, անշուշտ, կապ ուներ հայ դասական և համաշխարհային գրականության՝ իր նրբին իմացության, արվեստի ու գրականության գործիչների հետ ունեցած առնչությունների հետ։ Նա հոգևոր մտերմություն ուներ Վ. Փափազյանի, Մ. Սարյանի Խ. Դաշտենցի, Ս. Կապուտիկյանի և այլ արվեստագետների հետ։

Գրքում բացահայտվում են Ա. Շահինյանի ներաշխարհի այն ծալքերը ևս, որոնք նպաստում են նրա հետ ընթերցողի անմիջական ու անկեղծ ծանոթությանը։ Ի դեպ, գիտական միջավայրում և ուսանողական շրջաններում նա մեծ հեղինակություն էր վայելում ոչ միայն որպես խոշորագույն գիտնական ու ուսուցիչ, այլև ուղղամիտ և շիտակ բնավորության տեր անհատ։ Դրա անօրինակ դրսևորումն էր համալսարանի ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմի համառ պնդումներով Ա. Շահինյանի՝ հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավոր ընտրվելը, հակառակ կուսակցության կողմից արդեն նախապես առաջադրված թեկնածուի։ Մի չլսված ու եզակի բան, երբ իշխանությունները ստիպված էին տեղի տալ «ձայն բազմացին»։

Գրքի արժանիքներից է այն, որ բացահայտում է Ա. Շահինյանի, բազմակողմանի հետաքրքրասիրությունների լայն շառավիղը՝ հոգատարությունը սփյուռքի մեր ազգակիցների, հայրենիքի հետ նրանց կապերն ամրացնելու համար, երազանքը՝ հայրենիքում երբևէ ազգովին հավաքվելու և հաղթահարելու պատմության անարդարությունը։ Հիրավի, մաթեմատիկան քիչ էր Շահինյան անհատին բնութագրելու համար, բայց և բավական մեծ՝ նրա հոգևոր արժեքները հանրահայտ դարձնելու, և որ առաջնային է՝ նրան և հայրենական գիտությանը այնպիսի հռչակ տալու համար, որը դուրս է գալիս «մեր վաղեմի հայրենիքի այս բեկորի» սահմաններից։

Վերջում կուզենայինք ավելացնել, որ հատվածների ներքին տրամաբանությունը գրքին տալիս է ամբողջականություն, այն կազմված է ճաշակով և հրատարակչական արվեստի զգացողությամբ։ Կարելի էր անել մեկ-երկու դիտողություն (գրքի կազմի և տիտղոսաթերթի ենթավերնագրերի ոչ միատեսակության, խորագրերի և նյութի առավել համապատասխանության վերաբերյալ), բայց դրանք բնավ կարևոր չեն։ Կարևորը մտքի և հոգու ներդաշնակության բացահայտումն է Շահինյան մարդու մեջ, որով և գիրքը հասել է իր նպատակին։

ԽԱՌԱՏՅԱՆ Ա. Ա.
Պատմական գիտությունների դոկտոր